

չենք հաւատալ այն թեթևամիտ պիսովիստներին \*), որոնք վստահաւնումնեն հաստատել թէ Քրանսիպյի գերը Եւրոպայի պատմութեան մէջ արդէն վերջացել է, ուրեմն և Փարէզ էլ արդէն ասել վերջացրել է իր երգը թէ, եթէ ոչ այսօր, գէթ վաղը որ և իցէ Եւրոպական մայրաքաղաքներից (գիցուք Բերլինը) կըբռնի Փարիզի տեղը և կըդառնայ Եւրոպայի և բոլոր աշխարհի համար տիպար, իրբե գերի՝ իրան հետեւցնելով նոցա, թէ լաւ բաների մէջ թէ վատ, թէ մեծ բանի մէջ և թէ չնչին — Աչ, ամեն ոք, որ ճանաչումէ Փարիզին և Փարիզացիներին, որ ճանաչումէ Քրանսիպյին, մինչև անգամ առանց կողմնապահութեան պէտք է խոստովանուի, որ այդ անկարելի է: Թէ Քրանսիփան գեռ որքան տեսակ տեսակ թշուառութեանց և յուղմանց տակ ընկնելու ևս լինի, պէտք է եւրոպական քաղաքականութեան մէջ այն տեղը բոնի, որը սակաւիկ ընդհատուելով, պատկանումէր նորան, մշտական երկու դար ընթացքում, և թէ հետեւաբար, և Փարէզը, գեռ շատ երկար միջոց իր անդրանկութիւնը և առաջնութեան գերը չի զիջանի տալ ոչ մի եւրոպական մայրաքաղաքների:

(Թագավոր. ) Զ. Տ. Զաքարեանց:

## ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԱԲԵԼԻ.

(Յուրաքանչեղան, ուեւ Ալեքանդր Ռ. Պ. )

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Բ.

### ՏԵՍՈՐԾԱՆ ԱՌԱՋԻՆ.

(Հովանոցի տակ փոռւած են կանաչ խոտեր և ծաղիկներ ու պտուղներ: Շուրջ բազմել են, Ագամ ու Եւայ մէջ տեղ, աջ կողմը՝ Կային, Միհալայ ու Ենովք, իսկ ձախ կողմը՝ Եւայի մօտ, Աբէլ, և Թիրզայ: )

### ԱԴԱՄ.

Իմ սիրելի որդիք, տեսէք թէ ինչպէս է ցնծութիւնը թագաւորել ամենքիս գէմքի վերայ, որ արդիւնք է երկնային առաքինութեան, այսինքն մաքուր խղճի և սիրոյ. իմացէք որ այդ առաքինութիւնը մեզ Աստուծոյ տեսութեան կըկին պէտք է արժանի անէ. ընդ հակառակն

(\*) Պիսովիմբատ, Այն մարդն է, որ բոլորը տեսնումէ վատ կողմից, եւ հաստատումէ, թէ ամեն բան աշխարհի մէջ դէպի վատն է ընթանում. նորա հասկացողութիւնները ուղղակի հակադիր են Յատիմիստի հասկացողութիւնների հետ, որը հակամիտ է ամեն բանի մէջ. լաւը տեսնել եւ մտածել, որ ամեն բան դէպի լաւն է ընթանում աշխարհումը: Ետն, թարգմ:

ատելութիւնն ու նախանձը մեզ խաւարի անդունդի մէջ կը ձգի և Առառածոյ տեսութիւնից բոլորովին կը զրկի:

### ԵՒԱՅ.

Աղամ, ո՞վ կը հաւատար որ այս չափ բարիք պիտի պատահին մեզ այս երկրի վերայ՝ ուր ընակելու դատապարտութեցինք. ո՞չ, ո՞րչափ թշուառ էինք, երբ առաջին անդամ միայնակ այս լայնատարած ամայի երկիրն ընկանք:

### ԱԴԱՄ.

Փառք և գոհութիւն Աստուծոյ, ո՛ գիտէ տակաւին ի՞նչ բարիք տնօրինել է նա մեր համար, որ խոստացաւ կնոջ Զաւակի ձեռօք ջախջախել օձի գլուխը:

### ԱԲԷԼ.

Սիրելի ծնողք իմ, աղաչում եմ, այս ուրախառիթ և հանդիսաւոր երեկոյ վերստին շնորհ արա պատմել մեզ ձեր անցեալ օրերի պատմութիւնը, թէ ի՞նչպիսի կեանք անցկացրիք այս ամայի երկրի վերայ առաջին անդամ բնակելով. Հայր, մենք արդէն միտքներս լաւ պահել ենք ձեր այն պատմութիւնը. թէ ի՞նչպէս քեզ յանկարծ մի զուարձալի պարտիզի մէջ գտար և առաջին անդամ բանականութեանդ բարբառով արտասանցիր Աստուած, թէ ի՞նչպէս ամենայն նորաստեղծ անասուններ Աստուծոյ հրամանաւ քեզ մօտ եկան և նոցա բնութեան յարմար անուններ զրիր. ի՞նչպէս էիր վայելում զրախտի երջանկութիւնը՝ Աստուծուն գէմ յանդիման տեսանելով. մտքներս է նաև այն պատմութիւնդ թէ ի՞նչպէս յանկարծ անսովոր թմրութեան մէջ ընկար և զարթնելով տեսար մեր սիրելի մայրը քո մօտ կանգնած, որոյ ձեռքից բռնցիր և ասացիր. « այս այժմ ոսկը յոսկերաց իմոց և մարմին իմարժնոյ իմոյ. սա կոչեսցի կին զի յառնէ իւրմէ առաւ ». մտքներս է նաև թէ Աստուած ինչ էր պատուիրել ձեզ և ինչպէս չար ու խորամանկ օձը խարեց մեր մօրը և զրկեց երջանկութիւնից, Սերովրէների ու Քերովրէների բոցեղէն սրով փակուեց ձեր և մեր գէմ զրախտի գուռը մինչև որ կնոյ Զաւակը օձի գլուխը ջախջախի և մեզ այս պանդիստութիւնից կրկին մեր հայրենիքը վերադարձնի: Այս ամէն պատմութիւնը մենք անմոռաց տպաւորել ենք մեր մտքի մէջ, որով միշտ յիշում ենք Աստուծոյ գթութիւնն ու անյիշաչարութիւնը:

### ԱԴԱՄ.

Իմ որդիք, ես պարտաւոր եմ միշտ պատմել ձեզ Աստուծոյ արած բարիքն, և գուք ևս ձեր որդւոց և թոռանց աւանդեցէք, որպէս զի նորասուրբ Անունը միշտ երախտագիտութեամբ և պատկառանք յիշուի. բայց ասա Եւայ, այժմ ո՞ր տեղից սկսեմ պատմութեանս սկիզբն, այն տեղից արդեօք, երբ ձեռն ի ձեռն ամօթահար գլխակոր զրախտի գոնից

գուրս ելանք, չըհամարձակելով յետ դառնալ կամ խօսել, այլ լուս և տիսուր՝ գողգոջուն քայլերով վայրենի խոտերի և երթեմն ապառաժուտ քարերի վերայից անցնելով յառաջ էինք գնում՝ չըգիտենալով թէ ուր պիտի դադարէինք, և ինչ պիտի պատահէր մեզ.

## ԵՒԱՅ.

Աղամ, աղաչումեմ, թո՛ղ որ ես պատմեմ պյն, ինչ որ կրեցի, կտմ զգացի նոյն ժամուն ահ, երբ դրախտից բաւական հեռանալուց յետոյ սրտապատառ և աղի արտասուօք լանջացդ վերայ ընկայ՝ աչքերս դէպ ի փափկութեան դրախտը դարձնելով՝ խորին հառաջանքիցս լեզուս փակուեց, չըգիտէի ինչ խօսել. մանաւանդ երբ հրեշտակների բոցավառ սուսերը փայլումէին աչքիս առաջ, և խղճահարութիւնս սրածայր փշերի պէս ծակումէր սիրտս, որ պատճառ եղայ իմ և քո թշուառութեան Ո՛հ, իմ որդիք, սաստիկ հոգնած ու նեղուած, քաղցած ու ծարաւ հասանք մի բլրակի ստորոտը. առաջին անգամ քրտանց աղբիւրի մէջ լողալով, նստայ մի ապառաժի վերայ յուսակուր, լուս և տիսուր . . .

## ԱԴԱՄ.

Թող, Եւայ, ես շարունակեմ. այն բլրակի տակ աղբիւրի մօտ կամեցայ, հաստատել մեր բնակութիւն նոյն գիշերուան համար, ուր մի փոսի շուրջը մոցառներով հիւսեցի, գազանների երկիւղից պատսպարուելու համար, որոնք մեր անհնազանդութիւնից յետոյ նախկին ընտել բարքին հակառակ՝ աչքերով անգամ սարսափ էին սպառնում մեզ, մինչև իսկ տկար բղեղները և մոծակները Խայթումէին մեզ, ամեն արարած մեզ թշնամի դառնալով. յանկարծ, նոյն օրը, սև ամպեր պատեցին երկնքի երեսը և սկսաւ երկինք և երկիր սարսափելի և սոսկալի որոտումներով գղրդալ. մենք սպասելով մեր կորստեան՝ լեղապատառ գետին փռուեցինք, և ամաչումէինք գիմել գէպի Աստուած և օգնութիւն խնդրել. Երեկոյեան ժամանակ դադարեցին հողմերը, որոտումները և շանթերը, և շատ ծառեր մոխիր դարձնելուց և ապառաժ քարեր ձեղքելուց յետոյ, սկսաւ յորդահոս անձրեւ, և այն օրը եղաւ մեզ ցուրտ զգալու սկիզբն. ո՛հ, իմ որդիք, անկարող եմ պատմել ձեզ նոյն գիշերուան ահ ու գողն, երեակայութիւնս իսպառ խանգարուած՝ տանջվումէի, ամենայն ինչ աչքիս սուդ զգեցած էր երեսում. Առաւօտը նորից փարատուեցին ամպերը և արել նոր հրաշալի պայծառութեամբ ծագեց, Աստուծոյ՝ մեզ հագուցած մաշկեակը չորացրեց և ապա սկսեցինք շարունակել մեր Ճանապարհը, բայց թէ ուր պիտի գնայինք, անյայտ էր մեզ ամենայն տեղ օտար էր երեսում մեզ. սակաւ մի յառաջ գնացինք, Եւան մի թոշուն գտաւ անշնչացած, զննեց և գոչեց. ո՛հ, այս է մահը՝ որ Աստուած սպառնացաւ մեզ. ո՛հ, եթէ այս ամայի անապատի մէջ մեր երկութիցս մին զոհ լինի մահուան, ի՞նչ պիտի լինի կենդանի մնացածի վիճակը, յուսադրեցի իրան և շարունակեցինք մեր ուղին. ներքին աղդեցու-

թեամբ մի աղքիւրի մօտ՝ հաստատեցինք մեր բնակարանը, և այն օր եղաւ մեզ՝ առաջին անգամ քրտամբ ճաշակել, մեծամեծ դժուարութեամբ քաղելով պտուղներ, որ իւրեանց գեղեցկութեամբ և համով շատ պակաս էին դրախտի պառաղներից: Այս օր գտայ մի խոյ և մի մազի, դոցա մեզ ընկեր արի խրճիմիս մէջ: Անցաւ նոյն ամառն, եկաւ աշուն՝ պսակուած զանազան պտուղներով, որ չորացրի ապագային մեզ կերակուր լինելու. Հետզհետէ փոխուեց եղանակն, և բնութիւնը սդաւորուեց. ծաղիկները գունաթափուեցին և չորացան. մերկացան ծառերն իրանց պտուղներից և տերեւներից, ձիւնը սպիտակ քողով ծածկեց երկիրը. երկար միջոց անգործ մնացինք խրճիմի մէջ, մինչև կրկին եկաւ գարունը, և զարդարուեցին բոլոր արարածները նոր կենդանութիւն ստացած: Զուարճութիւնը թափաւորեց բնութեան վերայ. ծնաւ մազին և աւելացաւ մեր կերակրոց վերայ քաղցրահամ կաթն ևս. Աստուծոյ հրեշտակը մեզ մօտ եկաւ, քաջալերեց մեզ Աստուծուն ապաւինել, նաև սեղան շինել և նորածին գառն ողջակէզ անել նորան, զոր այրեց երկնքից իջած հուրն ի նշան ընդունելութեան Տեառն:

## ԱԲԷԼ.

(Խօսքն ընդ միջելով,) պատուական հայր, ներիր համարձակութեանս. որ պատմութիւնդ ընդհատումեմ, հապա Երբ ծնաւ մեր սիրելի եղբայր Կային:

## ԱԴԱՄ.

Մի օր, այն ինչ աշխատութենէս գարձայ խրճիմ, տեսայ որ մայրգ քեզ, իմ Կային, փափուկ բրդի մէջ փաթաթած, զիրկն առած ուրախութեան արտասուօք և համբուրիւ գուրզուրումէր, զիրկս առի քեզ, որ հնեցի և յանձնեցի նորա համբերատար խնամոց. սկսար օր ըստ օրէ աճել և զօրանալ, և դեռ նոր սկսած էիր ափս ի թերս գնալ, ծնաւ Միհալան, և դու յայնժամ սկսար ծաղիկներով զարդարել նորա զլուխը և սիրապատար խնդութեամբ համբուրել. յետոյ, Արէլ, դու ծնար և ապա Թիրզան: Արպիսի ցնծութեամբ լցուեց մեր սիրտը, երբ ձեր տղայական խաղերն և հրճուանքները դիտում էինք, և զբաղած էինք խնամել ձեզ, փորձով տեսնելով, որ նորածին մանուկն աւելի խնամոց կարօտ է քան թէ գառն: Օրհնեալ է Տէր, որ այսչափ սքանչելիքներ է դործում և մեզ իսպատ երեսից չի ձգում: Արին պարտաւոր ենք սիրել, միշտ երախտագէտ լինել նորան և հնաղանդել: Սիրելի որդեակք իմ, խնդրումեմ որ գուք նախ սիրեք Աստուծուն և ապա միմեանց՝ ինչպէս ձեր անձն:

## ԱԲԷԼ, ԹԻՒԶԱՅ ԵՒ ՄԻՀԱԼԱՅ.

(Ատքի վերայ ենելով համբուրումեն Ագամայ ու Եւայի ձեռները, իսկ Արէլ ասումէ) ընդունեցէք ու պատուական ծնօղք, մեր շնորհակալութիւնը, որ անկարօղ ենք լեզուով պատմել, ընդունեցէք մեր խոնարհ

Համբոյրը իբրև մեր սրտի զգացմանց ապացուց և նշան, օրհնեալ է Ա.յն, որ կը խնամէ մեղ առհասարակ, և օրհնեալ է.ք դուք, որ կը պահպանէք մեղ և կուղղէք դեպ ի բարին:

## ԿԱՅԻՆ.

(Հոգւոց հանելով ակամայ համբուրումէ Ադամայ ու Եւայի ձեռները), Ընորհակալ եմ և ես, բայց ներեցէք ինձ, որ հանգստանամքնով, վասն զի հոգնած անդամներս փոքր ինչ հանդիստ են պահանջում, որ կարող լինին առաւօտ անդիս մէջ կրկին կրել երկրագործութեան ծանր աշխատութիւնն, որուն կապուած եմ չարաչար:

## Ա.ԴԱ.Մ.

Հանգստացի՞ր իմ որդի, որպէս զի անդամներդ կրկին ոյժ ստանան, որով կարողանաս կատարել Աստուծոյ հրամանը, այսինքն քրտամբք ձաշակել, Եւայ, Արէլ, Թիբրզայ, գնանք մենք էլ հանգստանալու մեր խրճիթների մէջ. ձեղ գիշեր բարի, իմ որդիք, (կը մեկնի):

## ԵՒԱՅ,

Հանդիստ քուն և քաղցր երազ մաղթեմ քեզ իմ անդրանիկ Կային (կը մեկնի):

## ԿԱՅԻՆ.

## ԳՆԱՔ ԲԱՐԵԱԼ:

## ԱԲԷԼ.

Սիրելի եղբայր իմ Կային, ինգութիւնիցս՝ այս գիշերը ինձ ցերեկ է համարվում, թէ և չեմ կամենում քնել, բայց քեզ հանգստութիւն հարկաւոր է. խաղաղ քուն եմ մաղթում (ձեռքը համբուրումէ ու Թիբրզայի հետ հեռանում):

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

## ՄԻՀԱԼԱՑ ԵՒ ԿԱՅԻՆ.

## ՄԻՀԱԼԱՑ,

Ինչո՞ւ տակաւին ճակատիդ կնճիռն չի յետ գնում, իմ սիրելի Կային. այն հանգստութիւնը, որ քո սրտի մէջ դարձաւ, այսօր տակաւին չկարաց տիրութեանդ սե ամպերը փարատել:

## ԿԱՅԻՆ.

Ինձ խօսել մի ստիպեր Միհալայ. ձեր ուրախութիւնը աւելի է խոցում սիրաս. ոչ ապաքէն դորանով կամենումէք ցոյց տալ, իբրև թէ Կային մոլորուած էր, ուղղուեցաւ, իբրև թէ չար էր ու եղբայրատեաց, այսօր բարի դարձաւ. ոչ, ես ոչ մոլորուած էի, որ ուղղուեցի, և ոչ չար ու եղբայրատեաց էի ու բարի եղայ, այլ ինչ որ էի, նոյն եմ, ձեր անմտութիւնը այսպէս է գատում և կարծել է տալիս. ես Արէլին ընաւ չեմ ատել, միայն թէ նորա կեղծաւոր բնութիւնը ինձ զգուելի

է, վասն զի նա իւր կեղծաւորութեամբ թէ ծնօղացս է սիրելի եղել և թէ հանգիստ վիճակ է ընտրել . . . , Միհալայ, ի՞նչ անմտութիւն է մեր ծնօղաց՝ իրանց ամօթալի անկման պատմութիւնը միշտ կրկնել, որ այնչափ թոյլ ու տկար եղան մինչ չըկարացին մի պտուղ պակաս ուտել, և մեզ տակաւին չըծնած թշուառութեան մէջ գլորել, դրախտից զրկել, որով դատապարտուեցինք անհնարին տանջանքով ու քրտինքով ձաշակել մեր հացը. Միհալայ, այժմ դու ասա, ամօթ չէ որ մեր ծնօղքը իրանց ամօթալի անկման պատմութիւնն միշտ կրկնումեն:

### ՄԻՀԱԼԱՅ.

Բայց . . . Կային, խնդրեմ մի բարկանար արտասուացս վերայ (լալով), աղաչումեմ, մի թոյլ տար որ տրտմութեան փարատուած ամպերը կրկին դիզուեն գլխիդ վերայ. Արելին մի ատիր, և մի բամբասիր մեր ծնօղքը՝ որ Աստուծոյ սքանչելիքը և Նորա մեծ գթութիւնն են մեզ պատմում, մեր սրտի մէջ երախտագիտութիւն և առաքինութիւն ցանելու համար են անում:

### ԿԱՅԻՆ.

Գնանք Խրճիթը հանգստանալու, շատախօսութիւններ գլուխս տարան այսօր: ( կը մեկնին )

### ՏԵՍԱՐԱՆ Դ.

#### ԱԲԵԼ.

Ո՛չ, հայրս սաստիկ որովայնի խիթով տանջվում է. ի՞նչ անեմ Աստուած իմ, գու օգնէ նորան: ( կը չոքի բազկատարած ) Օրհնումեմ Քեզ, Տէր երկնի և երկրի, օրհնումեմ Քեզ, որ անսահման գթութեամբ և իմաստութեամբ տնօրինումես ամենայն ինչ, համարձակվումեմ նեղութեանս մէջ օգնութիւն խնդրել. թէ և գու իմ խնդրելուց յառաջ գիտես մեր պիտոյքն և հոգումես, Քո տնօրինածդ միշտ բարի է Աստուած իմ. եթէ իմ փափաքս Քո սուրբ կամաց հակառակ չէ, աղաչում եմ, պարգևեր մեզ մեր պատուական հայրը, որ Քո գթութիւնը միշտ պատմէ մեզ; Փարատէ նորա ցաւերն, որով չարաչար տանջվումէ. Քո մէկ ակնարկութիւնդ հրաման է նորա ցաւերն հալածելու, Աստուած իմ: ( յանկարծ աշաւոր լուսափայլութեամբ մի հրեշտակ է մտնում):

### ՏԵՍԱՐԱՆ Դ.

#### ԱԲԵԼ ԵՒ ՀՐԵՇՏԱԿ.

#### ՀՐԵՇՏԱԿ.

( Փունջ մի ծաղիկ ձեռքը ) Արել, քո չերմեռանդ աղօթքը լսելի եղաւ ամենակալ Բարութեան, որ հրամայեց ինձ օգնել ձեզ. առ այս ծաղիկները, յստակ ջրով եփիր, տուր Աղամին որ խմի և առողջանայ:

(Արէլ խոնարհութեամբ առնումէ ծաղիկը և հրեշտակը աներեւութանումէ)։

### ՏԵՍԱՐԱՆ Ե.

#### ԱԲԷԼ.

(Ապշութեամբ) Ո՞վ Աստուած իմ, ես ո՞վ եմ, հող և մոխիր և մեղա-  
սոր մի մարդ, բայց դու բարեհաճումես լսել պաղատանքս. ո՞վ Տէր իմ,  
ի՞նչպէս կարող է մի մահկանացու՝ արժանաւորապէս գոհանալ Քեղա-  
նից կամ գոհաբանել Քո անսահման գթութիւնը. ոչ միայն մահկա-  
նացուաց տկար շրթունքը, այլ և անմահից գունդն ես չէ կարող ար-  
ժանապէս օրհնել քեզ։ (Հեռանումէ)։

### ՏԵՍԱՐԱՆ Զ.

#### ԿԱՅԻՆ.

Հայրս բաւական տկար է, սաստիկ տանջվումէ, իսկ մայրս բոլորովին  
յուսահատած արտասուաց հեղեղներ է թափում իւր աչքերից. ես էլ  
չըկարողացայ համբերել, ակամայ աչքիցս արտասուք թափուեց, նորա  
խօսքերն ազգու էին և սրտիս խորերը թափանցեցին. ասումէ թէ ես  
պիտի մեռանիմ. բայց չէ, չըկարծեմ որ նա մեռնի, մարդ ինքնին  
ի՞նչպէս պիտի մեռնի. Աստուած իմ, դու ես մի թողուր որ մեռնի,  
տակաւին ափսո՞ս է, ինձ օգնումէ դժոխային երկրագործութեանս  
մէջ. բայց եթէ մեռնի, ես ի՞նչ անեմ, թող արգելած պտուղն չուտէր  
որ չըմեռնէր.... արդեօք մահն ի՞նչ բան է, գայլի նմա՞ն է, որ ի՞նչպէս  
յափշտակումէ ոչխարը, մահն էլ այնպէս պիտի յափշտակէ և  
ժանիքներով փշրէ հօրս. ո՞հ ինչ վատ բան է մահը. Աստուած իմ, մի՛  
թողուր հօրս, որ մեռնի, ես խոստանամ իմ աղքատութեանս չափով  
զոհ մատուցանել Քեզ. բայց ես գնամ մի առանձին տեղ հանգստա-  
նամ մինչ առաւօտ, որ մի՞գուցէ կրկին անգամ գան ինձ գտնեն,  
տանեն և մինչ ի լոյս անհանդիստ անեն։

(Արէլ կըմանէ)։

### ՏԵՍԱՐԱՆ Է.

#### ԱԲԷԼ ԵՒ ԿԱՅԻՆ.

#### ԱԲԷԼ.

Եղբայր իմ Կային, Տէր լսեց մեր պաղատանքն և առողջացրեց մեր  
պատուական հօրը։

#### ԿԱՅԻՆ.

2է՛ Արէլ, նա շատ տկար է, տակաւին չէ առողջացել, գուցէ կառող-  
ջանայ, ես շատ աղօթեցի նորա համար և խոստացայ զոհ մատուցա-  
նել Աստուածոյ, եթէ հայրս առողջանայ։

## ԱԲԷԼ.

Եղբայր իմ Կային, Աստուած գլուխ մօրս աղի արտասուաց, լսելով մեր ամենքի պաղատանքը, Հրեշտակի ձեռքով մի փունջ ծաղիկ տուեց ինձ, որ Նորա Հրամանի համեմատ պարզ ջրովեփեցի տուի Հօրութեաց և իսկոն առողջացաւ, օրչնեց Աստուծուն և մեզ. նա առաւօտիւր սեղանի վերայ զոհ պիտի անէ, մեք ևս պարտաւոր ենք զոհեր մատուցանել ի շնորհակալութիւն:

## ԿԱՅԻՆ.

Ես ի՞նչպէս չըրարկանամ և չընտիանձեմ. մի ժամ ես աղօթեմ Հօրս համար, բայց Հրեշտակը ինձ չերեի և ծաղիկ չըտոյ, այս է իմ անդրանկութեան պատիւն, այս է իմ արտասունքի և աղօթքի վարձքը, մարդու մօտ անպատիւ, Հրեշտակի մօտ անպատիւ և գուցէ Աստուծոյ մօտն ևս անպատիւ. քո ձեռօք բժշկուեց Հայրս, ուրեմն ևս աւելի պիտի սիրէ քեզ և անդրանկութեանս օրչնութիւն ևս պիտի տայ քեզ. վայ ինձ և եղուկ, որ անդրանիկ ծնայ. ես ի՞նչ սրտով զոհ պիտի մատուցանեմ Աստուծոյ՝ որ ինձ չըլսեց:

## ԱԲԷԼ.

Եղբայր իմ Կային, ո՞չ ապաքէն Աստուծոյ գլուխթիւնը մեզ հաւասարապէս ողորմեց, առողջացնելով մեր պատուական Հայրը և այն ևս գուցէ մօրս և մեր ամենի արտասուաց խնայելով ուրեմն առաւօտ գնանք մեր զոհերն մատուցանել, խոնարհութեամբ և ամենայն սիրով, ընտրելով մեր ամենալաւ գառները և պտուղները:

## ԿԱՅԻՆ.

Թէպէտ աղքատութիւնս ինձ չի ներում զոհ մատուցանել, բայց պիտի մատուցանեմ, վասն զի խոստացել եմ. չըկարծեմ թէ դառն քրտինք թափելով աշխատանք անել և ընտանիք զրկելով զոհ մատուցանել՝ Աստուծոյ հաճելի կը լինի. պէտք է աւելորդ պտուղ ունենալ և յօժարութեամբ Աստուծոյ նուիրել:

## ԱԲԷԼ.

Եղբայր իմ Կային, Տէրը մեր զոհին ընաւ կարօտ չէ, վասն զի ամենայն արարածք իւրն են, այլ միայն մեր սրտի ջերմեռանդութիւնը, աստուածպաշտութիւնը և երախտագիտութիւնն է պահանջում, որոյ նշան և ապացոյց կը լինի մեր զոհաբերութիւնը:

## ԿԱՅԻՆ.

Աէս զիշեր անց է կացել գեռ ևս չեմ հանգստացել, զուր անքուն անհոնգիւտ եմ լինում. Հերիք մորք ինձ ինձ հանգիստ թողէք: (Կըմեկնին):

## ՏԵՍԱՐԱՆ

ԱՆԱՄԵԼԵՔ.

( Սեագեմ՝ երկար եղջիւրներով, պոչով, սև մազեղէն հադուստով, կէս այծ, կէս մարդ, երկու ոտքի վերայ կանդնած և մի հեծանոց ձեռքը բոնած ) Միթէ՞ ես Սադայէլից պակաս գործ կարօդ եմ կատարել. ինչո՞ւ փառք և պատիւ միայն նա վայելէ գոռողաբար աթոռի վերայ բազմելով, ես աննշան, անանուն խառնիճաղանձ դկերի մէջ նստիմ անգո՞ծ. ո՞չ, ո՞չ. ես էլ ման գալով երկրագնդի վերայ, ջանամ, աշխատեմ մի այնպիսի գործ գործել, որ բոլոր գժուիք զարմանայ և ինձ Սանդարամետի փառք և պարծանք ճանաչէ. երթամ գտնեմ Կայինին, նորա ձեռքով փորձեմ թէ, ի՞նչ է մահու մեսնելը, զոր Աստուած սպառնացաւ Ադամին, երբ որ գրախտից մերժելով ձգեց անապատ երկրի մէջ. բայց երկիրն ևս զեհեան չէ, նորա վերայ էլ կարող են հանգիստ ու երջանիկ ապրել. Եյսուհետեւ լինիմ անբաժան ընկեր Կայինին, որով կարողանամ թշուառութիւն և մեղք մացնել մարդկանց մէջ, և ես էլ պարծենալու տեղ ունենամ ընկերներիս մէջ. Եթէ Սատանան պարծենումէ Ադամին ու Եւային գրախտից զրկելու վերայ, հապա ո՞րչափ մեծ կը լինի իմ փառքն ու պատիւը, երբ իմ կամքս Կայինի և նորա նմանեաց ձեռքով պիտի կատարեմ միշտ, վասն զի Կայինի սիրտն իմ կամաց համաձայն է. ոխ, ատելութիւն, նախանձ, բարկութիւն և այլին նորա սրտի մէջ մէկի տեղ հարիւր են պառող տալիս. Գլուխս հնաբըներու գանձարան է, պիտի աշխատեմ երկրագունդը գժուիքից աւելի թշուառութեան տեղի դարձուցանել, գնամ զիշերս խորհեմ:

( Հեռանալու ժամանակը վարագոյրը իջնումէ ):

( Յարդանակէլ ):

Պ. Գալուստ Նիրմազանեանի ուղարկած յայտնի հայոցէ տ հանգուցեալ Մեսրոպ Թաղիաթեանցի հետեւալ բանաստեղծութիւնները տպաւմնենք ինդրելով միանգամայն որ եթէ սոյնպիսի գրուածքներ ես գտնուին, ուղարկեն խմբագրութեանս, որ ուրախութեամբ սրտի կը նկատունուին :

Խոժոռագէմ Աթանաս, կ՞ը ինձ այսքան խստանաս, Աւր ո՞չ կամք են և ո՞չ իղձ, Պարապել քոց իմաստից Կորիցէ քո այլուրեն, Ար միշտ քաղէ զիմ հողին, ՕՇ թէ լեալ էր իմ անբան, Եղն լծեալ ի զութան:

Քան աեսանել զանողոք, Զերես քո ինձ ի մարմնք Եւ տրորել ծաղիկ տիս Ի գիւտ քոյին ցնորից, Առ ի՞նչ պիտեն քո ուսմունք, Քո ցաւագին սկզբունք, Եյն ինչ ոսկի և արծաթ, Էղմարդ առնեն միայն մարդ:

